

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

02. 05. 2016թ.

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ա. Բեջանյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Հ. Մկրտչյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Ն. Համբարձումյանը, Վ. Դոխոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
- Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ
- Ա. Չատինյանը - ԱԽ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

**Օր ա կ ա ր գ ու մ`**

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզպետարանի ենթակայության հիմնարկների, Լոռու մարզի համայնքների, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ` վերջիններիս կողմից չհիմնավորված ծախսերը հնարավորինս բացառելու նպատակով:

2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ԼՂՀ-ում վերջին իրադարձությունների հետևանքով տեղահանված և Լոռու մարզում ժամանակավոր ապաստան գտած ընտանիքների երեխաների մասին` ներկայացնելով նաև առաջարկություններ նրանց հետագա կրթության և դաստիարակության վերաբերյալ:

/Ժամկետ` 5 օր/

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**